ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ- 24/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ 02.07.2024թ. ժամը 12:00

Ք. Գյումրի Գ. Նժդեհի 3/3

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	Լուսինե Արսենյան
Հանձնաժողովի անդամներ՝	Արուսյան Գևորգյան
	Վերգինե Թառլոյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Լիանա Շելեգոն

Ժամը 12:00 գնահատող հանձնաժողովի նախագահը նիստն համարեց բացված:

1. Էլեկտրոնային հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Լուսինե Արսենյան)

- Մասնակիցների կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը համապատասխանում են հրավերով նախատեսված պահանջներին, բացառությամբ «Վիտա Մեդ» ՍՊԸ-ի, «ԷՅԷՅ ԻՆԺԻՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ի, «ՀԵՐՄՈ ՖԱՐՄ» ՍՊԸ-ի, «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի և «Խաչպար» ՍՊԸ -ի կցած հայտերի:

Ընդունվել է որոշում՝ կողմ –3, դեմ՝ –0 :

2. Բացված յուրաքանչյուր էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Լուսինե Արսենյան)

- Բոլոր փաստաթղթերն առկա են:

Ընդունվել է որոշում՝ կողմ –3, դեմ՝ –0

3. Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

(Լուսինե Արսենյան)

- Բոլոր փաստաթղթերն համապատասխանում են, բացառությամբ «Վիտա Մեդ» ՍՊԸ-ի, «ԷՅԷՅ ԻՆԺԻՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ի, «ՀԵՐՄՈ ՖԱՐՄ» ՍՊԸ-ի, «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի և «Խաչպար» ՍՊԸ-ի: Մասնավորապես,

1. «Վիտա Մեդ» ՍՊԸ-ի Հավելված 1.1-ը չի համապատասխանում հրավերի պահանջներին, լրացված չէ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը և արտադրողի անվանում սյունակները:
2. «ԷՅԷՅ ԻՆԺԻՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ի Հավելված 1.1-ը լրացված չէ հրավերին համապատասխան:
3. «ՀԵՐՄՈ ՖԱՐՄ» ՍՊԸ-ի հայտում բացակայում է լիազորագիրը:
4. «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի Հավելված 1-ը /ԴԻՄՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ PDF ֆայլը/ ամբողջական սկանավորված չէ:
5. «Խաչպար» ՍՊԸ-ի Հավելված 1-ը /ԴԻՄՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ/ և Հավելված 1. 1- ը /մոդել սյունակը/ լրացված չէ ըստ հրավերի:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3 դեմ՝ -0 :

4. Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացված պարզաբանումների մասին

(Լուսինե Արսենյան)

- Հարցումներ չեն եղել, բացառությամբ «Գոհար Ալեքսանյան» Ա/Ձ-ի, «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի և «ՎԱՅԹԲԵՐՐԻ» ՍՊԸ-ի: Մասնավորապես

«Գոհար Ալեքսանյան» Ա/Ձ

Հարց: ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/31 ընթացակարգի հարգելի համակարգող պարզաբանեք, խնդրեմ, թե ինչ արտաքին ձև և չափեր պետք է ունենան 1-ին չափաբաժնում նկարագրված էՍԳ-ի էլեկտրոդները և ինչ հիմքով պետք է լինեն՝ ծակոտկեն թե կտորից:

Պատասխան: Արտաքին ձևը կարևոր չէ, մեծահասակների համար է գելով, կրկնակի կպչուն: Նախատեսված Հոլտեր, տրեդմիլ կամ այլ հետազոտությունների համար:Կարևորը կպչունությունն է, մնացած բոլոր պարամետրերը ստանդարտի համապատասխան:

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ

Հարց: Արդյո՞ք ըստ արտադրողի 10-րդ չափաբաժնում նշված Մեկանգամյա օգտագործման թեսթ-երիզ գլյուկոմետրը ունի աշխատանքային ջերմաստիճան՝ 5 -45 °C Խոնավություն՝ 10 տոկոս - 93 տոկոս և Արյան ծավալի անբավարարության դեպքում 30վրկ ընթացքում արյուն ավելացնելու երկրորդ հնարավորություն (Secondchance):

Պատասխան: Կարելի է ներկայացնել ըստ արտադրողի ստանդարտի:

«ՎԱՅԹԲԵՐՐԻ» ՍՊԸ

Հարց: Հարգելի գործընկեր խնդրում ենք պարզաբանել արդյոք N 14 չափաբաժնի անհրաժեշտ քանակը ճիշտ է գրված? եթե ոչ ապա խնդրում ենք շտկում անել:

Պատասխան: Այո ճիշտ է:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3 դեմ՝ -0 :

5. Ներկայացված բողոքների և դրանց վերաբերյալ կայացված որոշումների մասին

(Լուսինե Արսենյան)

- Բողոքներ չեն եղել

Ընդունվել է որոշում՝ կողմ -3 դեմ՝ -0 :

6. Հակաօրինական գործողությունների հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագրի մասին

(Լուսինե Արսենյան)

- Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3 դեմ՝ -0 :

«Վիտա Մեդ» ՍՊԸ- ին, «ԷՅԷՅ ԻՆԺԻՆԵՐԻՆԳ» ՍՊԸ- ին, «ՀԵՐՄՈ ՖԱՐՄ» ՍՊԸ- ին, «Նատալի Ֆարմ» ՍՊԸ- ին և «Խաչպար» ՍՊԸ -ին առաջարկում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները և անհրաժեշտ փաստաթղթերը ուղարկել:

Փաստաթղթերի գնահատման նպատակով նիստը հետաձգվում է սույն թվականի հուլիսի 4-ին ժամը12:00-ին:

Հանձնաժողովի նախագահ՝ Լուսինե Արսենյան

Հանձնաժողովի անդամներ՝ Արուսյան Գևորգյան

Վերգինե Թառլոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լիանա Շելեգոն